



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.542 - 93

~~4-93~~

3359

891.995

4-85

Հայոց
Տի 3

111

121/1

096 - 8/170

Հ Տ Ե Ր Ա Բ Ր Ա Կ Ա Մ Ե Ա Ն

1875

5343

891.99 v.93

4-853

178

16

Ա շ պ ե ր ն ե պ ե

Ե Ր Ե Խ Ա Յ Ա Կ Ա Ն

Վ Ի Պ Ե Մ Ե Ն Ո Ւ Թ Ի Ւ

Ա Շ Ա Խ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ւ

Ա Ր Մ Ե Ն Ի Կ Վ . Կ Ր Ի Ց Ե Ա Ն Ց

1008
36192

2



2004.

Ռ Ո Ս Տ Ո Վ (Դ օ ն ի վ ե ր ա յ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄ ԱՄԵԼԻ



Փալկէնքուրդ * քաղաքում մի քանի
տարի յառաջ, մէկ ամենաբարձր լե-
րան գագաթը շինուած հնացեալ ամ-
րոցում բնակումէր Տէօֆոն անունով քա-
ջասիրտ Վսպետը:

Նա միշտ պատրաստ էր օգնել և
պահպանել թշուառներին և անբաղդ-
ներին և բաղդատրացնել մերձաւորնե-
րին: Վյա ամենը նորա համար տմենա-
մեծ վայելչութիւն էր համարուած: (Օտի-
լիան (նորա կինը) նոյնակէս բարերար և

* Խնազէս երեսումէ քաղաքի անունից, սա լինելու է գերմանիայում.

ինամակալ էր չքաւո՞ներին. Նա միշտ գնումէր այցելութեան մերձաբնակ աքսորականներին, ծածուկ ողորմութեամբ կառավարելով նորանց. Նոյնպէս և տեսութեան էր գնում հիւանդներին և միմիթարումէր՝ խորհուրդ և օգնութիւն տալով նորանց:

Ութնամեայ Ազնեսան (Տէօքալդի և Օտիլիայի միակ դուստրը) նմանապէս բարերար էր իւր ծնողաց պէս մարդասէր ամենքին, նորանում գտանվումէր բաւականին. Հաճութիւն, երբ հարկաւորումէր բարի առնել մէկին:

Երջակայ բնակիչները նուիրումէին ամենախորին յարգանք նորա բոլոր գերդաստանին և խորին յարգութեամբ պատվումէին ասպետին: «Կայելով բարձրագոյն ամրոցին, վերացնումէին ամենաջերմ սրտով մաղթանք առ բարձ-

րեալն Աստուած՝ նորանում բնակուող ների համար Աստուածային օրհնութիւնը կարծեա յայտնի հանգչած էր ասպետի և իւր ընտանեաց վերայ, որովհետեւ չնայելով ամենօրեայ ողորմութիւններին և օգնութիւններին որ առնումէր կարօտելոց, լցրեց նորա տունը միշտ ամենայն լիութեամբ:

Տնանկներին ողորմողը միշտ ընդունումէ Աստուծուց իւր արածի հատուցումն, ինչպէս Քրիստոս ասաց. „Երանի ողորմածաց՝ զի՞նոքա զողորմութիւն գտցեն“:

Դարնան ժամանակը մէկ գեղեցիկ օր Օտիլիան և իւր փոքրիկ աղջիկը (Ազնեսան) ճաշելից յետոյ քարեայ սանդուղներից իջան այգին, որ շինուած էր լեռան տակը: «Նոքա տեսնելով այնտեղ բանջարեղինների և պտղատու ծառերի *

բազմաթիւ տեսակները՝ մեծ զարման-
քով նայեցան կեռասի ծառին վերայ,
որ նոր սկսած էր ծաղիկներով ծած-
կուիլ, և որից մի քանի քայլ հեռաւո-
րութեամբ անցնումէր այգիին մէջէն
մի յորդահոս գետակ: Այն գետակին
մօտենալով՝ նոքա բաւական ժամանակ
խոխոջանաց ձայներ լսեցին և ջրոյն
մաքրութեան վերայ զմայլեցան: Ուշա-
դրութեամբ նայեցան նաև այն տեղի
զանազան կանաչեղիններուն, որոց վրայի
անձրեի կաթիլները արեգական ծառա-
գայլթներից գոյնզգոյն երանզներ էին
ձեւացնում ծիածանի նման:

Այնտեղ մի խոտաւէտ տեղում քիչ
հանգստանալուց յետոյ, կրկին ճանա-
պարհ ընկան դէպի հիւղը և պարապե-
ցան զանազան աշխատութեամբ: Կոքա
այնտեղ կարումէին զանազան հագուստ-

ներ, եղեգնից գործումէին այրիների և
տնանկների որբ որդւոց համար տեսակ
տեսակ զլխարկներ :

Եյգու մէջ համատարած լուսվիւն
էր թագաւորում և ոչ մի աղմուկ լսե-
լի չէր, բացի երգիչ թռչունների ձայ-
ներից, որոնք գտանվումէին ծառերի
վերայ, և առուակների ամենաքաղցր
խոխոջիւնից: Եյս ժամին յանկարծ
շարժվեցաւ հիւղի մօտ սրբնթաց մի
թռչուն, ուր որ նոքա երկիւղից վեր
կացած այս և այն կողմ հայելով, տե-
սան թփի վերայ կանգնած մի գիշակեր
թռչուն, որ տեսներով Օտիլիային և
Եգնեսային, սլացաւ դէպի վեր: Եգնե-
սան ահաբեկած մնաց անշարժ: Մայրը
բռնեց Եգնեսայի ձեռից և քաջալերե-
լով առաց: „Մի երկնչիր, սիրելի դուստր,
եկ իմ մօտ, Ճշմարիտ որ մի չչին թրու-

չուն սարսափեցրեց քեզ . և սկսեց Ազ-
նեսան իւր մօր հետ որոնել երկիւղի
առիթը :

— Ե՞ս, մայր իմ, յանկարծ բարձրա-
ձայն գանչեց Ազնեսան, տե՛ս սիպտակ
ձիւնանման աղաւնեակը որ անբաղդի պէս
թագ կացաւ ձեր յետքում : (Օտիլիան յետ
դառնալով բռնեց թռչունը, տարաւ հիւղը
և ասաց իւր աղջկան . Չե՞ս կամենում,
ես կհրամայեմ, խորովել քեզ համար
երեկոյեան ընթրիքին :— Խորովե՛լ . . . ,
գանչեց Ազնեսան . Նորա այս ձայնելովը
իմացուեցաւ սրտի զարմանքը . յետոյ
բռնեց աղաւնեկին, նորան մահից աղա-
տել ցանկալով :

Մնյը, իմ սիրելի մայր, դուք հա-
ւաստի ծաղրածու էիք կարծում այս .
խղճալի կենդանին խնդրումէ մեզանից
օղնութիւն . մենք ուզումենք զրկե՞լ

կեանքից : Օարմացած նայելով նորա
սպիտակագոյն փետուրներին և վարդա-
գոյն ոտքերին, համբուրեց նորան և
ձեռը դնելով նորա սրտին՝ ասաց . ա՞ս,
մայր իմ, որպէս է բաղխում սորա
սրտիկը : « Ա նայումէ ինձ աղերսական
նայուածքով , որպէս թէ կամենումէ
ասել . մի՛ առնուր ինձ չարիս : Ոչ, սի-
րուն թռչնակ, մի՛ երկնչիր, ես ինսամք
կտանեմ քո բարօրութեան վերայ :

— Գեղեցիկս, իմ որդի, ասաց մայրը,
դու գուշակեցիր իմ միտքը , ուրեմն
տար աղաւնեակը քո անձնական սենեակը
և կերակուր տուր իրեն : Պէտք չէ եր-
բեք մերժել կամ անգոսնել անբաղդ-
ներին, որոնք որոնումեն մեր պաշտ-
պանութիւնը, այլ հարկաւոր է կարե-
կից լնել ոչ միայն մարդկանց, այլ և

անասնոց (անասունք անմռռանալի կպահեն բարերարութիւնը):

(Օտիլիան հրամայեց շինել մի փոքրիկ և գեղեցիկ վանդակ՝ աղաւնեակը պահպանելու համար: Ազնեսան իւրաքանչիւր օր գնումէր տեսութեան և նմանապէս տանումէր իւր հետ նորա համար կերակուր և երբեմն մաքրումէր նորա ընակարանը, միով բանիւ լիովին հոգացողութիւն ունէր նորա վերայ. սովորեցրուց նոյնապէս կենաց նոր ձեւեր. վերջապէս աղաւնեակն ընտելացաւ: Այլ ևս չէր փակում վանդակը, և աղաւնեակը աղատ դուրս ու ներս էր թռչում, և զետնի վերայ գտնված փշրանքի հատերը նա հատիկ—հատիկ ժողովումէր: Շուտով բոլորովին աղատութիւն ստացաւ, այնապէս որ չէր ստիպվում միւս անգամ վանդակը փակելու:

Մի առաւօտ, երբ Տիրուհին դեռ չէր արթնցած, աղաւնեակը թռչելով եկաւ կանգնեց մահճակալի (հարաւառք) վերայ և չէր տալիս նորան հանգիստ, քանի որ չարթըննար և չտար կերակուր: Ոի անգամ Ազնեսան սաստիկ դժգոհութեամբ բողոքեց մօրը, թէ ևս չեմ արձակում նորան, որովհետեւ անհանգիստ է առնում ինձ. կիակեմ գիշերը վանդակը և նա չի կարող աւելի թքոչկոտել:

—Ոչ, իմ սիրելի դստրիկ, պատասխանեց (Օտիլիան, քեզ աւելի լաւ կլինի, եթէ վաղ վեր կենաս անկոլիցդ, այս սովորութիւնը օգտաւէտ է մարդու առողջութեանը և մեր հոգու զուարթութեանը: Այս, ամօթ կլինի քեզ համար, եթէ ծոյլ լինիս թռչնիցն անգամ: Ազնեսան օգուտ քաղելով այս

կըրթոթենից, սովորութիւն արաւ վաղ վեր կենալ: Ո՞ի անգամ Եզնեսան, երբ նստած էր բացուած լուսամուտի վերայ, աղաւնեակը կտցահարեց նորա ոտքի վերայ գտնուած հացի փշրանքը, և թռչելով գնաց կանգնեցաւ դրացու տանիքի վերայ: Երբ այս տեսաւ Եզնեսան, բարձր ձայնով աղաղակեց. աղաւնեակո, աղաւնեամկա..., մայրը շոապով գնաց մօտը և հարցրուց աղաղակի պատճառը:

— Մայր իմ, ո՞ւր է իմ աղաւնեակը, լալով ասաց Եզնեսան և ցոյց տուեց դրացու տանիքի վերայ նստած աղաւնեակը, ուր նա պախումէր(*):

— Կանչիր նորան, ասաց մայրը: Եզնեսան կատարեց իւր մօր խօսքը և խկոյն աղաւնեակը թռչելով եկաւ նստեց նորա ձեռքի վերայ, որով ապշեցաւ Եզնեսան

այն միամիտ թռչունի զարմանալի հպատակութեան վերայ:

Ոիրելի դուստր, ասաց մայրը. դու ևս խոնարհ և հեղ եղիր իմ կամացը, որպէս այս թռչունը քո կամացը. այն ժամանակ իմ ուրախութիւնը աւելի շատ կլինի քո այժմեան ուրախութենից, և Ճշմարտապէս իմ բաւականութիւնը այդ է:

Եզնեսան խոստացաւ իւր մօրը՝ կատարել նորա բոլոր պատուէրները: Ո՞ի անգամ, երբ երեկոյեան պահուն ջուր էր լցնում ծաղիկների վերայ, զբաղմունքից վաստակած նստեց ջրմուղի հանդէպ դալար խոտի վերայ՝ մօր մօտ: Եղաւնեակը մինչ այն աստիճան ընտելացած էր, որ Եզնեսան տուել էր նորան բոլորովին աղատութիւն. նա թռչում

* Տեղական բարբառով թռչունների զրունակուն են ասում.

Եր ջրմուղի մօտ և խմումէր այնտեղից ջուր:

—Տես, մայր իմ, ասաց Եգնեսան, որպիսի զգուշութեամբ նա թռչկոտումէ քարից դէպի քար, վախենումէ, որ չլինի, թէ ապականուի ցեխով. ո՞րպէս մաքրասէր է այս փոքրիկ թռչնակը. ապշեցնումէ ինձ նորա սպիտակութիւնը, նորա փետուրների վերայ չկատնվում ոչ մի բիծ:

Դու երբեմն վարվումես առանց զգուշութեան, ասաց մայրը, տես քո հագուստները. և ճշմարիտ Եգնեսան ջրամանը ջրմուղից լցնելու ժամանակը աղտեղացած էր ցեխով, որովհետեւ նա յառաջ շատ գեղեցիկ էր. այս ժամանակից նա սկսեց սիրել մաքրութիւնը և մաքրութեամբ վարվիլ. մի քանի ժամանակից յետոյ Եգնեսան իւր մօտ հետ

մի փոքր ճանապարհորդութիւն արաւ, որից ստացաւ բազմօգուտ շահեր, իւրեանց վերադառնալու ժամանակը աղամեակը դիմեց նոցա յառաջը, ցոյց տալով իւր սրտի ուրախութիւնը: Չեր բացակայութեան ժամանակ, ասաց աղախինը Եգնեսային, նա տրտմութեան մէջ էր և որոնումէր ձեզ ամեն տեղ, աւելի զարմանքն այս է, որ կենդանին զրկուած բանականութենից, կարող է ճանաչել իւր բարերարին, իմանալ նորա բացակայութիւնը և լինել այնքան մտերիմ: Այո՛, շատ երախտագէտ է այնպիսի նշին կիրակուրների համար, որ ես տալիս եմ նորան ամենայն օր:

Յիրաւի, դատողութիւնդ շատ լաւ է, ասաց մայրը, բայց այս ես գիտե՞ս որ քեզ այսօր շատ բաւականութիւններ և բարերարութիւններ եղած է. դու

արդեօք գոհացած ես Աստծանից նոցա
փոխանակ: Եմօթ չէ որ թռչունը այս
բանիս մէջ աւելի գերազանց կտնուի
քան թէ դուն: ապա՞ բանիք պիտօնար

Եզնեսան կարմրեցաւ ըստ որում
դեռ չէր մտածած Աստուծոյ վերայ:
Իայց նա այն օրից սկսած՝ չէր պարկում
քնելու, մինչև չգոհանար Աստծուց նու-
րա բարերարութեանց և նախախնա-
մութեանց համար: ‘Կա ամենայն օր
բարձրացնումէր իւր մտքի հայուածքը
դէպի վեր՝ առաւօտեան և երեկոյեան
աղօթքը մատուցանելիս:

Ոէկ առաւօտ, երբ աղաւնեակը
նստած էր սեղանի վերայ, և իւր քաղցր
նայուածքը դարձուցած էր տիրուհուն,
Աիրելիդ իմ թռչնիկ, ասաց Եզնեսան
աղաւնեկին. քեզանով. շատ բանում դաս-

տիարակուեցայ. Ես քեզ պարտական իմ
մինչև այն կէտը, քանի որ դու իմ
մօտ ես դանվում: Այս խօսքին վերայ
Օտիլիան յարմար ժամանակ համարե-
լով՝ ասաց նրան թէ. „Եզնեսա, տես-
նո՞ւմես դու այդ միամիտ թռչնոյն սպի-
տակութիւնը, — անսմեղութեան հաւա-
տարիմ և գեղեցիկ նշանն է. նա բարի,
անկեղծ և հեղ է, ինչպէս վկայումէ մեր
Տէրը. „Լէրո՞ւք միամիտ իբրև զաղաւ-
նիս“: Աիրելիս, այս բարեսիրտ անսմե-
ղութիւնը թռող լինի քո ամենօրեայ
գործերումը. իսկ խարդախութիւն, իսո-
րամանսկութիւն և կեղծաւորութիւն թռող
չունենան տեղի քո սրտումը: Ազօթք
արա Աստուծոյ ամենայն ջերմեռանդու-
թեամբ, որ կարողանաս բարոյական
յատկութիւներովդ քո սիրելի աղաւնե-
կիդ նմանիլ:

Օտիլիայի ինողրուածքը կատարուեցան. նորա դուստրը միշտ վարումէր իւր անձը անկեղծութեամբ և մաքրութեամբ:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

Այս ժամանսակները շրջակայում երելով աւազակաց բազմութիւն, սարսափ և գողէին ձգել բնակիչների սրտում:

Եղբ Տէօբալդ այս բանը լսեց, իսկոյն ելաւ նորանց բոլորովին հալածեց հեռաւոր երկիրներ: Պատերազմը յաջողութեամբ աւարտելուց յետոյ, ուրա-

խովթեամբ դարձաւ իւր ամրոցը: Օտիլիան և Վգնեսան հետաքրքրութեամբ և մեծ ուշադրութեամբ լսեցին նորա պատմութիւնը, թէ ինչպէս յաղթեց, գերեց ու հալածեց կողոպտեալներին և ապահովացրեց շրջակայ բնակիչներին:

Օրը արդէն երեկոյանալով՝ հարկ եղաւ ճրագ վառել. իսկ ասպետը իւր խօսակցութիւնը շարունակումէր: Վյոմիջոցին յանկարծ դուռը բացուեցաւ, ներս մտաւ մի սև հագուստով տիկին տիսուր և գունաթափ կերպարանքով: Կա բունած էր իւր մանկահասակ որբ աղջկան ձեռքից, որ իրեն նման սև զգեստներ հագած էր:

Վսպետը վեր կացաւ տեղից և իւր ամուսնոյ հետ միասին ողջունեց անձանօթուհոն: Իսկ սա հառաջելով խղճալի ձայնով բարեւց և հրամայեց իւր

աղջկանը որ ծունկ չոքի բարեսիրտ աս-
պետի յառաջ, յետոյ “Վզնուատոհմ և
վեհանձնասպետ, ասաց, թէպէտ ես ձեզ
ոչ մի ժամանակ չեմ տեսած, սակայն
լսելով ձեր մեծահոգութիւնը, որ ունիք
դէպի որբերու այրիները, ինդրումեմ
այժմ ձեր պաշտպանութիւնը“: Այս
խօսքերն արտասանեց այրին հազիւ թէ
լսելի ձայնով, բատ որում նորա հեկե-
կանքը չէր թոյլ տալիս: Ոզորմելի կինը
ճանապարհորդութենից վաստակած լի-
նելով ներազութիւն խնդրեց հանգատա-
նալու: Եթե ասպետը նորանց ովլինելը
հարցրեց, նա սկսեց պատմել նոյնպէտ
վշտալի կերպով. „Ես մի այրիացած կին
եմ, Գագէնբուրդ քաղաքից“ Ուռալնու-
անունով, իսկ այս երեխան իմ որբա-
ցած դուստրն է, ինչ անունով:

— Ուրեմն այրի՞ էք:

— Այո՛, և կարելի է յայտնի լինի ձեզ
իմ նեղութեան պատճառը: Իմ քաջա-
գործ այրը, (Ադալրիի) վախճանեցաւ
վէրքից, որ ստացել էր պատերազմի մէջ:
Դուք լաւ կճանաչէք այն ազնուաբարւոյ
մարդուն, որ բարերար էր անբաղդնե-
րին. նա մեզ թողեց մի փոքրիկ ժառան-
գութիւն, որ այն ևս երկու նախան-
ձուտ ասպետներ կամենումեն յափշտա-
կել մեղանից: Կորանեց մէկը զանառ-
զան պատճառների տակ որոնումէ առ-
ոիթներ յափշտակելու մեր փոքրիկ
դաշտը, որ գտամվումէ ամրոցի մօտ:
Իսկ միւսը կամենումէ իւր անձին սեպհա-
կաննել մեր փոքրիկ անտառը: Ունա-
բարութիւն, միանգամայն և անիրա-
տութիւն են անում նոքա, որք երրեմն
իմ մարդու բարեկամն էին համարվում:
Իմ բարեպաշտ Ադալրիիը առաջուց

իմանալով՝ այս բաները, մեռանելու ժամանակ ասաց ինձ. „Յոյսդ առ Եստուած դիր և Տէօբալդ ասպետի հովանաւորութեան տակ եղիր. այն ժամանակ ոչ մէկը չի կարող զրկել կամ վնասել քեզ“; Եզնուատո՞հմ ասպետ, կատարեցէք իմ ամուսնոյ վերջին բառերը: Ո՞հ, ի՞նչ կլինի ինձ, եթէ նոքա զրգեն իմ սեպհականութենից, միմիայն ինձ կմնայ ամրոցի որմերը... ինչով պէտք է մենք ասլրենք: Ասպետ, կարելի է և ձեզ պատահի այսպիսի անբաղդութիւն, և ձեզ կարելի է անդութ և յափշտակիչ մահը զատէ ձեր կոսջից և աղջկանից. և այն ժամանակ նորանց էլ հարկաւոր է զօրեղ պաշտպան:—

Փոքրիկ Խմբան (Եզնեսային հասակակից) մօտենալով ասպետին անկաւնուրա առաջը և լալազին ձայնով „Մի-

Ժողուր մեղ անտէր ու անօդնական, ասաց խղճալի, վասն զի քեզանից զատ պաշտպան չունինք մենք: — Միրելի որդեակ, պատասխանեց Տէօբալդ, աղջկան ձեռքը բռնելով, ամեն որբերի, այրիների ու տնանկների Պաշտպանը պահէ ձեզ: Այն ժամանակ Եզնեսան ևս „Միրելի հայր, ասաց արտասուալից աչքերով, աղաջումեմ ձեղ չմերժել սոցա սրտառուչ աղաջանքը. վասն զի երբ ես աղանեկին ազատեցի գիշակեր թռչուններից, մայրս ասաց՝ „Թէ պէտք է ինամել այն թշուառներին, որք մեր պաշտպանութիւնը կը ինդրեն“: Քարեհոգի մայրս ուրախացաւ նկատելով իմ կարեկցութիւնը դէպի թռչունը: Հարժելով նորա խօսքերից, Տէօբալդը պատասխանեց. „Ենչոգ եղիր, սիրելի գուտար իմը Եստուծոյ օգնութեամբ

կաշխատեմ պաշտպանել նոցա։ Ես մոտածումէի միայն այն մասին, որ գտանեմ նոցա պաշտպանութեան հնարքը։ Եյս ասելով ասպետը, հրաւիրեց Ոտղալինդին հացկերութեան։ Լմման նստեց Եզնեսայի մօտ, իսկ (Օտիլիան հացկերութեան պատրաստութիւն էր տեսնում)։ Պատրաստութիւն ու պատրաստութիւն էր տեսնում։ Ոտղալինդի անիրաւ ոստիները, որոնք մոտադիր էին անվայել և անարգաբար վարփիլ, Տէօբալդ սաստիկ խռովեցաւ նոցա վերայ և խոստացաւ հետեւալ օրը պարապել նորա գործով և նորա հետ էլ խնդրեց սպասել ամբողութ, մինչեւ իւր վերադառնալը։ — Ոտղալինդը շնորհակալութիւն արաւ և գովեց մարդասէր հիւրընկալութիւնը և փառաբանեց Վատուծոյ ամենակարողութիւնը, երախտագիտութեան արտա-

տոք թափուելով իւր հրավառ աշերից։ Հետեւեալ առաւօտը Տէօբալդ ուղղեց ճանապարհը իւր քաջ ընկերներով։ Եղնեսան անպատմելի ուրախութեամբ լցուած էր, որովհետև իւր հասակակից Լմմայի հետ պէտք է անցուցնէր մի քանի օր։ ուստի և տարաւ նորան իւր փառաշխութ առանձնանենեակը։ Ճառախիտ այգին, ցոյց տուաւ նորան նոյնպէս իւր հանդերձանոցը, բազմաբիւրեան ծաղիկները և հեղահոգի աղամնեակը։ Եյտ երկու փափկասուն և սրտակաց երեխաների մէջ շուտով կապուեցաւ անկեղծ բարեկամութեան սէրը։ Ըարաթի վերջերում Տէօբալդ վերադարձաւ։ Եթ տալիս եմ բարի լուր, ասաց նա, դառնալով դէալի Ոտղալինդը, ձեր ոստիների անիրաւ պահանջմունքը չընդուն-

վեցաւ։ Սկիզբ նոքա շատ սակաւ ու-
շադրութիւն դարձուցին իմ խօսքին,
ուստի ես ստիպուեցայ դիմել սպառ-
նալեաց. ես յայտնեցի նորանց, որ հար-
կադրուած՝ գործ եմ ղնելու բոնու-
թիւնը, եթէ նոքա մուադիր են շա-
րունակիլ իւրեանց անվայել պահանջը։
Իայց հանդարտեցէք, ես աւարտեցի նո-
ցաշարադաւդիտաւորութիւնքը։ (Օտար-
ներից ո՛չ մէկը չի կարող հունձ անել
ձեր դաշտի վերայ, ո՛չ մէկը չի հա-
մարձակիլ որսորդութեամբ պարապիլ
ձեր անտառներում և ո՛չ մէկը չի
վստահանում հատանել նոցա միջից մի
կտոր փայտ։ Այստիկ ուրախութեան և
երախտագիտութեան մէջ Ոտզալինդը
չգիտէր ո՞րպիսի չնորհակալութիւն մա-
տուցանէր իւր բարերարին։
Եյ՛, վարձատրումէ ձեղ ձեր Տէր

Աստուածը, որբերի, այրիների և ան-
օդնականներիս պաշտպանին. ուղարկէ
Տէրը իւր օրհնութիւնը և ողորմութիւնը,
որ գալով հանդչի ձեր և ձերայնոց վե-
րայ. . . Օգայարանների խոռվովութենից
չկարողացաւ արտասանել աւելի մի
քանի խօսքեր. բայց ապետը հասկա-
ցաւ նորա այդպիսի շարժողութենից,
թէ ինչ էր կամենում առել։ Վէրջա-
պէս ժամանեց բաժանվելու վայրկեանը
և Ոտզալինդը պարապումէր դէպի Գա-
գէնբուրգ վերադառնալու հոգացողու-
թեամբ։
Ճրաժարական ողջոյն տալու ժամա-
նակը մանկտիք գրկախառնելով մի-
մեանց, սկսեցին արտասուիլ և չէին կա-
մենում թող տալ։ Կմման քանից ան-
գամ յիշել էր իւր ցանկութիւնը, ու-
նենալ իւր մօտը ընտելացրած աղաւ-

նեակը։ Եղնեսան մտաբերումէր նորա
վերայ և նկատելով որ իւր փոքրիկ
ընկերակիցը՝ սրտի փափագը ամենայն
ժամանակ պահպանումէր յիշողութեան
մէջ, վեր առնելով իւր սիրելի թռչնակը
մօտերից արտասուքով ոռոգուած այ-
տերին։ Համբուրեց և ընծայեց նորան
կմմային ի նշան անմոռանալի սիրոյ։
Կա շատ անգամ մերժեց աղաւնեակի
ընծայելը, բայց վերջապէս պէտք էր
լսել իւր ընկերակցի թախանձանքին։
Աղաւնեակի հետ ընծայեց նաև նորա
վանդակը, բայց այնպիսի լիասիրու կեր-
պով, որպէս մատուցանումէ, մայրը իւր
մանուկը յանձնելով նորան անձանօ-
թուհուն։ Իւր բարեկամի և ընկերացի երթա-
լուց յետոյ, Եղնեսան սկսեց զղջալ
(փոշմանիլ), որ ընծայեց նորան իւր

աղաւնեակը։ Ո՞չ, մայրիկ, ինչո՞ւ ես ա-
ղաւնու փոխանակ իմ զինտերս (օղ)
չընծայեցի։ Օտիլիան ասաց նորան. այդ
կարող ես անել ուրիշ անգամ, իմ սի-
րելի Եղնեսա. բայց հիմայ չկարողացար
սորանից աւելի բան ընծայել նորան. ա-
ւելի թանկագին ընծան չի կարող նորան
պատճառել այնքան բերկրանք, որպէս
քո աղաւնեակը և կարելի է վշտացու-
ցանէ նորան մի բան, որ քո սրտին սի-
րելի է և այնքան թանկագին չէ։

Ո՞ի փոշմանիր արածդ բարեգործու-
թենից։ Ե՛ռ օրինակ հայրդ, որ պատրաստ
էր զոհել իւր կեանքը, ցանկալով օգնել
հալածուած ու նեղուած որբերին, քո
կողմից դու նմանապէս հետեւեցար վե-
հանձնութեամբ ընծայելով այն, որ աւե-
լի գերազանց էիր համարում քան ամենը,
այն պատճառով միայն, որ միսիթարես

նոցա Նա՛, որ իւր մանկովթեան տարինեւ-
րում չի սովորում բարիք առնել մեր-
ձաւորներին, նա չի կարող ապագայում
ընկերին անկեղծ սիրել: Ենա ու բազայ
Քո զոհերի նմանները հաճելի են
Սստուծոյ և Կա չէ յապաղում փոխա-
րէնն հատուցանելու: Այ մի բարին Ել զիւ-
սքայ զանազան մազակ յանաձուայ-
սացի և պարզ ու պահմարտ ոչ-
ին միայն ոչ զու մայու ինաց
: Ել միայն մազակ և չ զիւ-
սքայ զանազան պահմարտ ոչ Ա
ուսպասուր զու բայց մասմայ ո՛ւ պահմ Ել
: Ել միայն զայ յանոր զու
Պողալինդը և Կամման հանդիսու կեանք
Եին վարում իւրեանց հնոտի դղեա-
կի մէջ. միանգամ երեկոյեան տարա-
ժամ, երկու անձանոթ մարդիկ սան-
դուխներից վեր եկան, որոնք իննդրում

էին չմերժել իւրեանց հիւրնկալութեա-
նից. նոցա հագուստը նման էր ուխտա-
գնացների հագուստին, ձեռքերին մի-մի-
ցուպ, իսկ նոցա եւրոպական խոյրը գար-
դարուած էր խեցեմորթով: Ուզալինդը
հրամայեց իջուցանել սանդուխներից,
տանել նորանց ներքին դստիկոնի մաք-
րագոյն սենեակը, տալ նորանց ընթրիք
և պատրաստել նոցա համար անկողին:

Տեղեկանալովոր պանդուխտները հան-
դաստացան, եկաւ նոցա մօտ իւր դստեր
հետ միասին: Ուկտագնացները ուոքի-
կանգնած՝ շնորհակալ լինելով պատուե-
ցին նորա բարեսրտութիւնը և սկսե-
ցին ձառել սրտառուչ կերպով սքան-
չելի պատմութիւնը սուրբ երկրի վերայ:
Ռոլորեքեան լսումէին նորանց մեծ ու
շաղրութեամբ, մանաւանդ Կամման, որ
առանձնակի լսումէր նոցա զարմանալի

պատմութիւնը մեծ ախորժանքով . յորդ
արտասուքը աղբիւրի պէս թափլում
էին նորա թուշերից և նորա երևա-
կայական սրտի մէջ ծագեցաւ այն կող-
մերը այց ելանելու սուրբ ցանկութիւնը :
Նա սաստիկ տրտմեցաւ մտածելով որ
իւր ցանկութիւնը դժուար պիտի կա-
տարուի : Աիրելի կմմա , ասաց նորան
մայրը , նկատելով նորա տիրութիւնը ,
մենք ամեն ժամանակ կարող ենք սլա-
նալ մոքով այդ կողմերը և տեսանել
Չիթենեաց լեառը , Գողգոթան և
Փրկչի գերեզմանը . պահանջվումէ միայն
ընթեռնուլ ուշադրութեամբ սուրբ Ա-
ւետարանը . նորանում մենք կլսենք
նորա տանջանքը , մահը և յարութիւնը :
Եթէ մենք միշտ դրօշմած ունենանք
մեր սրտի վերայ Նորա վարդապետու-
թիւնների և չարչարանքի յիշատակու-

թիւնքը , եթէ մեք նմանող լինինք նո-
րան հետևելով և պահելով նորա բոլոր
պատուերները , այն ժամանակ մենք կար-
ծես սուրբ Երկրում կընակինք . կարող
ենք այն ժամանակ լուսաւորել բոլոր
Երկրագունդը :

Ուստաղնացները հետզհետէ դարձու-
ցին խօսակցութիւնը Գալիքնբուրգի վե-
րայ և սկսեցին խօսել նշանաւոր զո-
վութեամբ Տէօբալդ քաջագործ ասպե-
տի վերայ Եթէ նորա դղեակը չա-
փազանց հետի չինէր այս տեղից , և եթէ
ես պատահեմ նորա տանը , ասաց օտա-
րականներից առաջինը , ապա ես ուրա-
խութեամբ կգնայի նորան տեսութեան : “
Ուողալինդը հաւատացրուց նորանց , որ
այն ճանապարհը , որ տեղից նորա պէտք է
անցանէին , զնումէ Փալկինբուրգի մօ-
տովը :

Ուխտագնացները բերկրեցան այս ծա-
նօթովմիւնից միւս օրը վճռեցին ուղղել
Ճանապարհը դէպի դղեակը : Ուղալինդը
և նորա դուստր Խմման խնդրեցին մա-
տուցանել բարեկամական սիրոյ ողջոյնը
իւրեանց բարերար քաջագործ Տէօբալ-
դին, բարեսիրտ Օտիլիային և փափկա-
սուն Վգնեսային : Խմման տուեց նորանց
իւրաքանչիւրին մի մի արծաթ դրամ,
որ ստացել էր մօրիցը . ևս և խնդրեց նո-
րանց ասել Վգնեսային, որ նորա աղաւ-
նեակը դեռ կենդանի է :

Ուղալինդը հրամայեց իւր ծառանե-
րից մէկին ցոյց տալ ամենակարճ Ճա-
նապարհը : Հետեւեալ օրը առաւօտեան,
երբ լուսափայլ արեգակը հորիզոնից դեռ
նոր էր դուրս եկել, ահա նոքա ու-
ղեորեցան : Ուղեցոյցը ուրախովմեամբ
գնումէր նորանց առաջը և այնպէս բաղ-

ձանքով ծառայումէր նորանց, մինչ զի
խնդրեց ներողովմիւն՝ տանել նոցացու-
պերը, բայց ուխտագնացները նորա վե-
րայ սակաւ ուշադրութեամբ երկար պահ-
պանեցին լուովմիւնը, երբ մի օձապր-
տոյտ և զառ ի վեր լերան մօտից ելան
աւելի համահաւասար Ճանապարհ, սկսե-
ցին խօսակցել Խտալերէն : « Կորահաս
մարդը, նոցա կարապետը ազգով Խտա-
լացի էր, դղեակում նորան կանչու-
մէին Խօնարդօ և այդ պատճառով նո-
րա այժմեան անունն էր Խօնարդօ : »

Մանկովմեան ժամանակից Վգալրիխ
ասպետը ընդունել էր նորան ծառայու-
թեան համար և բերել էր իւր հայրե-
նիքը : Թէպէտ Խօնարդօն արդէն քա-
նի մի տարի էր, որ բնակումէր Գերմա-
նիայում, սակայն նա չէր մտացել
իւր ազգային սեպհական լեզուն :

Մեծ ուշադրութեամբ նա լսումէր
ուխտագնացներին: «Աս արդէն կամե-
նումէր յայտնել նորանց իւր ուրախու-
թիմը իւր նախածանօթ լեզուի համար,
բայց յանկարծ նոցա զարհուրագին խօ-
սակցութիւնը ապշեցուց նորան: «Նոցա
խօսակցութենից ճանաչեց, որ նոքա
օտար զգեցեալ ուխտագնացներ էին և
որպէս երեսումէր, այնտեղը, որ տեղից
որ պիտոյ է անցանէին, նոքա շատ լաւ
գիտէին և նոքա պատկանումէին ասպա-
տակաց բազմութեանը, ցիր և ցան ե-
զած Տէօբալդից և կամենումէին քինա-
խնդիր լինել նորան: Այս նպատակաւ
բարեպաշտ մարդոց նման կամենումէին
մտնել Տէօբալդի դղեակը, ինդրել այն-
տեղ գիշերելու և նոյն գիշերը սպանել
ասպետին, կնոջը, դստերը և բոլոր նո-

րա մէջ բնակուտղներին, իսկ դղեակը
կողոպտել և հրդեհել:

Նոքա հեռուից նկատելով աչքերին
երեացող Գալկենքուրդ դղեակը, ասպա-
տակներից առաջինը (Լուպօ անունով)՝
ասաց իւր ընկերակից Օրսօն: „Եհա
այն մարդու բնակարանը, որ մեր ընկե-
րակիցների և նոցա պէս շատերի կո-
րատեանը պատճառ եղաւ: Մէք կը մեռցը-
նենք նորան զարհուրելի չարչարանքով,
կկապենք նորա ձեռքերն ու ոտքերը և
ողջ ողջ կրակի մէջ կը ձգենք նորան:

— Մէր ձեռնարկութիւնը շատ համար-
ձակ է, ասաց Օրսօն, մենք չենք կա-
րող յաջողութիւն ունենալ:

— Բայց ասպետի գանձի արժէքն այն
է, որ յարձակելով նորա վերայ, սպանենք
նորան, ասաց Լուպօն վրէժինդրութեամբ
կուրացած, ինձ աւելի զուարձակի է, քան

նեց Օրսօն, բայց ես մասամբ ինչ կասկածում մեր յաջողութեան վերայ:

— Որպէս երեսումէ, դու վախճնում ես, ասաց Լուպօն, միթէ դու ինձ լիովին չես հաւատում ինչո՞ւ ես կասկածում. միթէ մենք չունի՞նք դրացի ընկերակիցներ միայն թէ մենք պէտք է երեք ճրագ վառենք սենեկի լուսամուտներում, նոյն վայրկենում օդնութեան կրհասանեն մեզ եօթն քաջասիրտ ու զօրեղ ընկերակիցներ, որոնք երկարժամանակից սպասումն մօտակայքում. Նորանց կրնդունենք այգու դռնակից, որ ամենադիւրին է բանալը: «Նոցանից մէկը քաջ գիտէ դղեակի սենեակների ելեմուտքը: Միանալով նոցա հետ դիւրին կինի մեզ տիրապետել սակաւաթիւ ննջող մարդիկներին: Հանդիստ միասին: — Եյս բոլորը լաւ պատաժիաւ-

սեփականացնելնորա բոլոր ստացուածքը, թէև այն ես չեմ արհամարհում: Եթէ մեր այս ձեռնարկութիւնը յաջողի, մենք կը ինքնինք այն երեկի կամ աւելի լաւ ասեմ հարուստ մարդկանցից մէկը, այն ժամանակ կիթողնենք մեր անհանգիստ արհեստը և բոլոր հոգսերը և կը նաև կեանքի ամենահանգիստ եղանակը: Համբերիր Օրսօ, իմ միտքը ընկաւ ամենալաւ մտածողութիւն. մենք կհագնինք մեր վրայ ամենալաւ Տէօբալդական հանդերձներ, դու կախ կանես նորա ոսկեայ շղթան, բայց ես նորա ասպետական նշանը՝ պՃնազարդածթանկագին քարերով. մենք կուղերենք օտար երկիրներ, այն տեղերում կը նդունեն մեզ իբրև վսեմ իշխանազուն և այն ժամանակը կհարստանանք քեզ հետ միասին: — Եյս բոլորը լաւ պատաժիաւ-

կաց մենք անշուշտ յաջողութիւն կը-
գտնենք»:

Բարի Լէօնարդօն (Ուողալինդի ծա-
ռան) իմանսալով նոցա եղեռնագործ դի-
տաւորութիւնները տարակուսանքի մէջ
լուռ կեցած շարունակումէր նոցա հետ
միասին ծաղիկներ քաղելով և ոչ մի
նշան չցուցանելով՝ թէ հասկանումէ նոցա
խօսած լեզուն. իսկ մտքով աղօթումէր
առ Աստուած յամենայն սրտէ խափա-
նել եղեռնագործներին անել այդ շարա-
մտութիւնքը: Լէօնարդօն վճռեց առաջ-
նորդել նորանց մինչ դղեակը և այնտեղ
բոլորը մանրամասնաբար պատմել Տէօ-
բալդ ասպետին:

Այն ժամանակ երբ աւազակները
խորհրդակցեցան իւրեանց ձեռնարկու-
թիւնների վերայ, նոցանից մեծը զլորվե-
ցաւ և հազիւ թէ անյայտացած էր,

բայց բոնելով մացառից, պահեց իւրեան
անկումից: «Եորա նժդէհական ծպտեալ
հանդերձը պատառվեցաւ և Լէօնարդօն
նկատեց նորա տակը թագուցած կարմիր
բաճկոնը, շողշողուն զէնքերը և երկար
դաշոյնը, բայց նա այս անգամ ևս որ-
պէս չտեսած ձեւացուց իրան. ծերու-
նի եղեռնագործը շտապով թագցրեց
նշանները և զգուշութեամբ էր շարու-
նակում ճանապարհը: Շուտով հասան
ճանապարհորդները մի գետակի, որի
անցարանը հազիւ էր նկատվում, որով-
հետև այն աւուր եկած անձրելը յոր-
դացրել էր հեղեղը, մի կողմից էլ ահա-
գին ժայռերն էին արգելում: Ծերունի
աւազակը ասաց իւր ընկերին խտալերէն.
այս կորովամիտ պատանին հեշտ կարող
է նկատել իմ հրացանը և կարելի էնա
հասկացաւ մեր նպատակը: Ես ձգում-

Եմ նորան ի կործանումն և այն ժամանակը մեզ ոչինչ բան կթուի փրկուիլը։ Խեղճ Աէնարդօն սաստիկ տխրած էր. մահառիթ զարհուրանքից և մի քանի քայլափոխ հեռի կանգնած վտանգաւոր անցարանից, սկսեց գանչել երկիւղից, „Ես չեմ վճռում աւելի յառաջել. ես զգումեմ զիսապտոյտցաւ։ — Վասա ասաց նորան ծերունի աւազակը — մի վախիր իմ որդի, Եկ իմ մօտ, ես կպահպանեմ քեզ։”

Եյս ասելով վնաց դէպի Աէնարդօն և կամենում էր բոնել նորան, բայց նա յետյետ վնաց և կամենում էր փախչել մերձակայ մատառը, նկատեց, որ Աէնարդօն դիտաւորուած էր բոնել։

— Ո՞հ, ասաց մատաղահաս մարդք՝ դողլողալով բոլոր մարմնով, — թողէք ինձ աղերառումեմ ձեզ։ Ենցնելով՝ մենք

երեքս էլ կընկնինք գետը, իսկ եթէ ես էլ անցնեմ, վերադառնալու ժամանակը ինչպէս պէտք է անել ինձ, ուրեմն աղաչումեմ ձեզ թոյլ տալ ինձ, ձեզ այլ ևս ուղեցոյց պիտոյ չէ, արդէն մօտեցանք Փալկէնբուրգին։ Երիտասարդ աւազակը նկատելով Աէնարդօնի երկիւղը, ինքը ևս զգաց սոսկումն։ դորա համար ասաց ընկերակցին Խոտիւրէն։ „Ես չեմ կարծում, որ այս մանուկը նշմարած լինի մի բան, թէպէտնա նշմարեց քո լանջապանակը, այսու ամենայնիւ նորան յայտնի չէ մեր մոտագրութիւնը և ով կհաւատայ նորա խօսքերին, արձակիր խղճալուն։”

— Թոող այդպէս լինի, ասաց միւսը, սակայն աւելի ապահովութեան համար մենք անհետացնենք Ճանապարհներս, և եթէ նա երկբայի մեր մոտադրութիւնը,

ապա չունենայ կարողութիւն խափանել
նորան և ֆալկենբուրգ գնալու այլ ճա-
նապարհով, հարկ է անցանել քանի մի
մղոն այս կործանման շրջապատով, ապա
կարելի չէ ոչ մէկին ազդ առնել ասպե-
տին՝ յառաջ քան կատարումն մեր մտա-
դրութեան : ”

Եւազակները վեր առնելով իւրեանց
ցուպերը, արձակեցին դեռահաս մանկանը
մինչև անդամ՝ առանց շնորհակալու-
թեան : Հազիւ թէ նոքա վտանգաւոր
տեղի միւս կողմն անցկացան, Վէօնար-
դոն բոլոր զօրութեամբ արշաւել սկսեց,
որ շուտափոյթ հասանելով Ուոզալին-
դին, նոցա սոսկալի շարամտութիւնը
պատմէ :

Գ Լ Ս Խ Կ Պ .

Ուոզալինդը իւր դղեակի մէջ Հազեն-
քը բուրգում հանգիստ կեանք էր վա-
րում, նա բնաւ չէր մտածում վտան-
գի համար, որ սպառնումէր իւր պաշտ-
պան քաջ Տէօբալդին : Կմման մտածում-
էր միայն ուխտաւորների հրաշալի պատ-
մութիւնների վերայ և ձեռագործու-
թեամբ պարապելով՝ զանազան հարցեր
էր անում մօրը իւր լսածների վերայ :

Մըդէն երեկոյ էր և բուսաւորող ա-
րեգակը իւր օրական շրջանը կատարել
էր և իւր հրավառ ճառագայթները
մթնացած մնաւ հորիզոնի տակ, որ ա-
ւելի չէր փայլում : Եւ երբ օդը պարզուե-

ցաւ և զովարար հովը փչումէր, նոքա
իջան հովիսոր զբօսնելու : Արմատեղէնների
հասկերը, որոնք արդէն վայելչապէս բեղ-
մատորած էին, խոստանումէին առատ
հունձ : Կանաչացած դաշտերում շատ
տեղեր երեւումէին աչքի առաջև հոտա-
ւէտ ծաղիկներ և դաշտային խաշխաշներ,
ուր բոլորած էր բարեձև կտաւատը ծած-
կուած կապոյտ ծաղիկներով, որոնք գե-
ղեցիկ տեսարան էին ներկայացնում տես-
նողի աչքին : Որոզալինդան և նորա
դստրիկը զգացին ազդու ուրախութիւն,
խոստովաննելով, որ նոքա հազիւ չզբկուե-
ցան այս ամերնտիր երկրից, ուր Աստու-
ծուն հաճոյ էր այդպէս առատօրէն բաշ-
խել իւր պարզենները : Բարձրացնելով
իւրեանց մոքերը առ Աստուած՝ մտեր-
մաբար շնորհակալութիւն մատուցին նո-

րա անհուն բարերաբութիւնների ու ե-
րախտիքի փոխարէն :

Յանկարծ տեսան նոքա Անարդօին,
որ ամենայն զօրութեամբ վաղումէր ցնո-
րածի նման շնչառապառ և զունաթափ
հայուածքով :

„Ո՞չ... Տիրուհի, գանչեց նա հեռուից,
որպիսի ապաբաղդութիւն համբաւեմ
ձեզ. այն երկու մարդիկը, որոնց ես ա-
ռաջնորդեցի, ուխտագնացք չեին, այլ
աւազակներ : Նոքա մտադիր են սպանել
Տէօբալդ առպետին, նորա ամուսնուն,
դստերը և բոլոր ծառաներին, կողոպտել
և այրել նորա դղեակը :“

Անարդօն այնպէս էր վաստակած
վազելուց, որ չկարողանալով աւելի մի
խօսք արտասանել, անզգայ ընկաւ ծա-
ռի արմատի մօտ և երկար պառկեցաւ
բոլորովին անյուշ : Որոզալինդը և Ամման

գունաթափ եղած՝ Երկիւղից դողումէին։
„Եստուած իմ... առաջին նոքա. ի՞նչ կը-
լինի բարեհոգի ասպետին և նորա գեր-
դաստանին։ Լոմա, շոապիր շուտով դրդ-
եակը, կանչիր ծառաներից մէկին, պա-
տուիրիր ձի նստել և փոյթընդփոյթ գը-
նալ հասանել Գալկէնբուրգ, նախազգու-
շացնել բոլորի մասին մեր բարեկամնե-
րին. ասա, որ նա թռչունի պէս սլանայ,
չնայելով ձիաներին“։

Լոման արդէն մի քանի քայլ հեռու էր
դղեակեց, նորա ձայնէն մօտեցաւ աղա-
խինը ահարեկած։ Լոման հաղորդեց նո-
րանց Լէօնարդօի զրոյցքը, մօր հրաման-
ները։ Բոլորը սարսափեցան և ընդունե-
ցին համբաւը իսրին տրտմութեամբ,
որպէս թէ վտանգը յատկապէս նորանց
է սպառնացած։

Քիչ ժամանակից յետոյ եկաւ Ուո-

զալինդը Լէօնարդօի հետ միասին, որ
հաղորդեց այլ և մի քանի նոր լուրեր։
„Ի՞նչ էք անում ոյուք այստեղ, ասաց
Ուողալինդը, հարկաւոր է օգնել ոչ թէ
ցաւել. նստեցէք ձիանքը և արշաւեցէք
հասուցանել այս բոպէիս մի լուր իմ բա-
րերարին։

— Այդ անկարելի է, ասաց քաջա-
դործ Ըղալիիսի ծերունի ախոռապետը։
Ըւազակները հիմայ Գալկէնբուրգի մօտ
կինին և այստեղից մինչև այնտեղ Երկար
ճանապարհէ, մէկէլ որ ահա շուտով կր-
մմծնի և ճանապարհները իսանզարուած-
են անձրեխց, ամենաքաջարշաւ երիվա-
րով չեմ կարող հասանել առաւօտուց
յառաջ։ Անք հերկագործ ձիանները բո-
լորովին անպէտք են հեծնելու, իսկ ու-
ղեգնաց ձիանները վաճառուած են մեր
բարի տիրոջ մահուանից յետոյ։ Խղճա-

լի Ուօղալինդը ծալեց ձեռները յուսահատութենից . խորին աղէտալի վշտով վերամբարձուց աչքերո դէպի երկինք և արտասուքը առուակի պէս թափեցան նորա աչերից :

„Դթա՛ծ և ողորմած Աստուած , ասաց նա , գթա՛մեծահոգի մարդկանց վերայ և խափանիր աւազակների մեղադործ չարութիւնը :

— Աստուած , ասաց Լմման սաստիկ շփոթուած , օգնիր նորանց , ինչպէս նոքաօգնեցին մեղ : Խոլոր ծառաները կրրկնեցին միւնոյն ինդրուածքը :

— Ի՞մ բարեկամներ , ասաց Ուօղալինդը , որքան չափազանց լինին արգելքները Գալկենքուրդ հասանելու վաղ կէս գիշերին , սակայն փորձ առնել պէտք է իմանալու գոնեայ մի խօսք : Խաւական է խօսքը ազատելու Տէօ-

բալդը և նորա գերդաստանը : Ո՛չ , Եթէ Լէօնարդօն վաստակած և սաստիկ վազելուց տկարացած չլինէր , ապա նա կրկին կերթար ուրախութեամբ , բայց դու , Բավոս , շարունակեց նա դառնալով դէպի երիտասարդ ծառան , կարող ես կատարել այս . Եթէ գնաս դաշտի նեղ ճանապարհով , վաղ կհամանես : Քեզ հարիւր Փլորին կընծայեմ , Եթէ դու ժամանակին մատուցանես լուրը :

— Եյդ անկարելի է , պատասխանեց ծառան , ո՞վ է կարող գտանել ճանապարհի հետք այս խաւարչտին գիշերի մէջլեռներում , ազատ մնալով կորստեան մատնուելուց : Դորա համար հարկէ թրուզող լինել և թեւեր ունենալ , ասաց Լէօնարդօն , որպէս զի կարողանայ անցանել կորստեան միւս կողմը , որովհետև աւազակները ոչնչացրին միակ կամուրջը ,

որի վերայից կարելի էր անցամել :
— թե՛ք բարձր ճայնով դանչեց
կմման և նորա ազքերում փայլեցաւ
ուրախութեաննշան : Մայրիկ . . . մայրիկ,
իմ միտը ընկաւ մի հրաշալի հնարք :
Տէօրալդ ասպետը խորհուրդ տուեց
ինձ մեծ զգուշութեամբ արգելած պա-
հել աղաւնեակը, կամելով, որ առանց
այս զգուշութեան նա կարող է ի բաց
թռչել յետս դէպի Գալկենքուրդ . կա-
պենք մի նամակ նորա պարանոցից և
նա անյապաղկհասուցանէ նորա դգեակը :
— Գոհութիւն և փառք Աստուծոյ,
բացագանչեց մայրը, մեր աղօթքը և
աղաչանքը լսելի է եղած : Ոիրելի կմմա,
պահապան հրեշտակն էր, որ աղղեց
քեզ այդ սքանչելի միտքը, կատարենք
անյապաղ այդ հնարք : Կմման իսկոյն
րերեց իւր աղաւնեակը, կապեցնամակը

նորա պարանոցից կարմիր ժապաւենով,
մօր ուղեկցութեամբ ծերունի վահանա-
կրի և բոլոր սպասաւորների հետ միա-
սին յառաջուայ տան պատշգամբից ար-
ձակեցին : Եյնուհետեւ աղաւնեակը նախ
բարձրացաւ օդի մէջ, այնտեղ մի քանի
ժամ մնաց անշարժ, որպէս թէ դի-
տումէր դէպի ուր ուղղել իւր թռիչքը,
յետոյ յանկարծ դիմեց դէպի Գալկեն-
քուրդ :

Իոլորն ուրախացան, նորան օրհնու-
թեամբ ճանապարհ ձգեցին . նաւը՝ բեռ-
նաւորուած թանկագին և հազուա-
գիւտ իրերով երբէք չի ուղեսորել Ճա-
նապարհ այսպիսի բորբոքած փափազով :
Ոտղալինդը և կմման սաստիկ ան-
հանգստութեան մէջ էին գտանվում :
Կհամնի՞ արդեօք աղաւնեակը նշանակած
տեղը, ասաց մայրը, եթէ նորա վերայ

յարձակի գիշատիչթոչուն . դիցուք թէ
նորան ոչինչ չի հանդիպիլ , նա կարող է
տանել այսպիսի երկարատև ճանապարհը ,
արդեօք կտեսանե՞ն նորան Գալկենբուր-
գում կը մտնի՞նա դղեակը :

Մեծազօր և ամենակարող Աստուած ,
կարգաւորի՞ր ամենը այնպէս , որ նա
համնի ուղեղ մեր բարեկամներին :

Որդալինդն ու իւր դուստրը նստեցին
լուսամուտի մօտ . անդադար նայումէին
հորիզոնին աղօթելով առ Աստուած մե-
ծահոգի ասպետի ազատութեան համար .
խրաքանչեւր վայրկենում դարհուրում-
էին նոքա նկատելով երկնքում կարմրա-
փայլ ցոլացած գիշերային հրդեհանման
մի լոյս . արդէն գիշերը հաւասարած էր .
սաստիկ մրրիկ գուրս եկաւ , որով տա-
տանումէին անտառի բոլոր ծառերը .
տարածութիւնը , ուր գտանվումէր Գալ-

կենբուրգ՝ ծածկուած էր մառախուղով :
Յանկարծ Եմման և նորա մայրը զարմա-
ցան Գալկենբուրգի կողմը անակնկալ
լուսով լուսաւորուած տեսնելով : ‘Նոքա
զարհուրանքի մէջ սկսեցին ջերմագին
աղօթել :

Աստուած իմ , ասաց Եմման , բոցը
քանի գնումէ , աւելի սաստկանումէ .
նայիր , մայրիկ , նորա մրրիկը որպէս է
զօրանում , սաստկանում և ձգվումէ մի
կողմից միւսը . նոքա երկուսը հազիւ
չզրկուեցան զգացողութենից , բայց շու-
տով նորանց չափազանց ուրախութիւն
տիրեց և նոքանշմարեցին , որ խաբուած
էն . նորանց ահաբեկել էր մառախլա-
պատ մթնոլորտից կարմրացած լուսինը ,
որ ունէր պայծառ բոցի ճիշդ պատ-
կերը : Հարունակելով իւր փառահեղ և
վսեմ ճանապարհը երկնային կապոյտ

կամարի միջով, նա հետզետէ աւելի
սպայծառանում էր, և վերջապէս երևե-
ցաւ նորա լուսափայլութիւնը իւր առա-
ջին խկական դէմքով։ Դեռ ևս երկար
նկատելով այս՝ նոքա կանգնած մնա-
ցին լուսամուտի մօտ բոլոր փիշերը,
բայց չնշմարեցին ո՛չ մի հրդեհի նշան։

Ա երջապէս լուսացաւ, և նոքա մեծ
ուրախութեամբ, վերամբարձ ձեռներով
աղօթքի կեցան չնորհապարառութեան
գոհունակութիւն մատուցանելով առ
հարձրեալն Աստուած այն սարսափելի
փիշերն անցուցանելու համար։

Խոսքան ու ազգային անցում ա քեզիս
ուրիշն ունի ոչ յափառահա քանուու
ու ուրիշով նորապայութ պայմանութիւն ունաւ
ուստի քչին դիս ունեալու ոչիւս ու
ա քանուուի ոչին խոճանակայ։ Եղան
ուղարք ու ազգային անցում ա քեզիս

այս(ու զարայութ ապացուեցն զիշէ
այս զիստ նշանութիւնութեամբ և մասի
ու ուղարք իւրաքանչ պայման անց այստեղ

Առաջալինդը և Կմման թէպէտ ան-
երկրայ էին որ աւազակները չէին
կարողացել այրել դղեակը, բայց
սաստիկ անհանգստութեան մէջ էին
ասպէտի և նորա գերդաստանի համար։
”Ո՞չ ո՞րպիսի բերկրալի միսիթարու-
թիւն կլինէր մեզ, եթէ այս բո-
պէտմս մի համբաւ ստանայինք Գալկեն-
բուրզից, ասաց Ոռզալինդը. եթէ մէկը^{առաջանակ} մի յաջողակ լուր՝ ես յօժա-
րութեամբ կտայի նորան իմ թանկա-
գին և հաղուագիւտ իրերը։

— Իսկ ես, ասաց Կմման, կյաւե-
լացնէի դորա վերայ այն բոլորը, ինչ որ
ունիմ, “Նոցա անյայտ էր թէ ինչ է
ծագել դղեակում. ահա որպէս էր գործը.

Նրբ երեկոյացաւ, Տէօբալդը, Օտիլիան և Վգնեսան ուրախութեամբ նըստեցին աթոռների վերայ՝ սեղանի շուրջը։ Արդէն լուսափիւր արեգակը որ իւր օրական շրջանը կատարած՝ պէտք է մտանէր հորիզոնի տակ, իւր վերջին ճառագայթներով ոսկեզօծեց լուսամուտի մեծագոյն ապակիները և պատրաստ էր լուսաւորել վաղեմնի ճաշարանը, որի մէջ ժողովուած էին Տէօբալդի բոլոր ընտանիքը։ Նրբ նորա խօսակցումէին միմեանց հետ, ծառաներից մէկը ներս մտնելով իմաց արաւ ուխտագնացների գալուտը։ Ասպետը հրամայեց ընդունել, և ասաց. „Խա կիսոսակցիմ նորանց հետ ընթրիքից յետոյ, բայց հիմա կերակրեցէք նորանց և տուէք մի շեշ գինի“։ ծառան դուրս ելաւ; Վգնեսան մեծ ուրախութեան մէջ էր այս

մտքով, որ պէտք է լսէր ուխտագնացների զարմանալի պատմութիւնը։ Տէօբալդը, Օտիլիան և Վգնեսան հեռի էին կասկածանքից, թէ առաջիկայ գիշերը սոսկալի դժբաղդութիւն պէտք է սպառնայ։ Եթոռների վերայնստած հանդարտու համեստ խօսակցումէին, յանկարծ զարմացած Վգնեսան ձայն բարձրացուց. „Կտեսանէք դուք իմ Եղաւնուն արձակած թևերով, նա բաղխումէ կտուցով լուսամուտի ապակին, որպէս զի իմանանք և նորան ներս առնենք։

— Տես նորա գեղեցկագոյն մանեակը, ասաց մայրը, նորան կապած է մի տոմսակ, սա անշուշտ նամակ է . . . սա նամակ է, ո՞րպիսի ոգելից մտքեր կծնանին տղային“։

Ասպետը իսկոյն վեր առաւ զննել նամակը. հասցէն (աղրէաը) գլուած էր —

„Վարդացէք անյապաղ“։ Ասպետը բաց
արաւ նամակը արագութեամբ և կար-
դաց . նորա երեսի վերայ նկարուեցաւ
բարկութեան ստուերը։ „Եմենաբարձ-
րեալ Աստուած , ո՞րպիսի զարմանալի
Ի՞նչ կայ այդ . այդ տեղ , ձայնեցին
մայր և դուստր“։ Ասպետը կարդաց նա-
մակը՝ հետեւեալ բովանդակութեամբ , որ
առաջ մասնաւում կայ գործ գալաքայ ,
ինչ ուստի մասնաւում կայ գալաքայ ,
ուստի մասնաւում կայ գալաքայ
”ԱՄԵՆԸՉԵՔ ԱՊԳԵՏ .
: զանգաւոր ողջ մազում և զանգ
Ուխտազնացները , որոնք այսօր ե-
րեկոյեան պէտք է զան ձեզ մօտ ,
աւազակներ են , իսկ և իսկ այն վատա-
խորհուրդ անձներից , որոնց դուք հա-
լածական արեցիք . նոցանից էրեցն աւ
նուանսում . Լուսո , իսկ միւսը—Օրսո .
նոցա հագուստները ճօշ են և նոցա տակ

ծածկուած են դաշոյններ : Յառաջիկայ
գիշերումն կամենումնեն նոքա ձեզ ըս-
պանել , ձեր ամուսնուն (Օտիլիային) ,
դստերը և ձեր բոլոր մարդկանցը . ապա
կամենումն կողոպտել դղեակը և այրել :
Զգեստաւորած ձեր հանդերձով շղթայով
ու ասպետական նշանով , նոքա կամենու-
մն շատերին Ենթարկել խարէութեան
ներքոյ : Այլ ևս եօթը չարագործներ
գտնվումն մերձակայքում , որոնք ըս-
պատումն պայմանեալ նշանին : Երեք
վառած մոմերը լուսամուտի վերայ հիւր-
ընկալ սենեկում , ցուցանումնեն այն ժա-
մբ , թէ երբ պէտք է մտանեն դղեակը
այգու դռնակից , որ բանալու են երկու
աւազակները : Յուսով եմ առ Աստուած ,
որ աղաւնեակը ըստ ժամանակին կհատու-
ցանէ ձեզ նամակը , որ դուք կարողա-
նաք խափանել նոցա դիտաւորութիւնը .

այս լուրը ձեզ ուղարկել ոչ մի ճանաւրակով հնար չեղաւ։ Ուրեմն ծանուցէք ինձ ձեր փրկութեան մասին որքան կարելին է շուտափոյթ։

Երախուժէա աղլիին յէր
Թօջալբուդ.

Ամենաբարձրեալ Աստուած, որպիսի՞ հրաշագործութիւն, ասաց վրդուվուած Օտիլիան։ Երեմն աղաւնեակը բերեց Նոյին ձիթենեաց ձիւղը, բայց հիմա աղաւնեակը երեւումէ երկնքից ուղարկուած։ Ընդունիր մեր շնորհապարտ և գովաբանական աղերսը. Բարձրեալ Աստուած, փրկիչ մեր սուակալի մահուանից։

Տէօբալդ չկորմնցնելով ոչ մի վայրկեան, հրամայեց կնոջը և դստերը երթալ մերձակայ սենեակը, իսկ ինքը հագաւ իւր վերայ զէնքերը, կանչեց իւր ծառաւ-

ներից մի քանիսին, յետոյ ուղարկեցնա ուխտագնացների յետեից։

Մեղութեամբ նոքա մօտեցան ասպետին և յարգանք ցոյց տալով՝ ողջունեցին նորան. Լուպօն դարձաւ Տէօբալդին հետեւեալ խօսքերով. „Քաջասիրտ ասպետ, մենք եկած ենք ձեզ մօտ Հոգենբուրգից, մեզ յանձնած է մատուցանել ձեզ բարեկամական անկեղծ ողջոյն, բաղդաւոր ենք համարում մեզ գտանուելով այսպիսի հռչակաւոր մարդու գէմ, որի քաջութիւնը յայտնի է ողջ աշխարհին. ամենայն տեղ նեղելոց հովանի և պաշտպան դուք էք համարուած. այո՛, որբերն ու այրիներն էլ զուրկ չեն ձեր հայրական ինսամակալութենից. շատ դովասանութիւններ ձեր վերայ ասաց մեզ բարեպաշտ Ոտղալինդը, որպիսի յարգելի անձն է այն աղ-

Նիւ տիկինը։ Կա այնպիսի մեծարանք ցոյց տուեց մեզ, որին մենք երբէք արժանի չեինք։ Նորա դուստր Լյան, հեղարարոյութեան հրեշտակը, արտասուք թափեց, երբ պատմեցինք մեր պանդիստութիւնը։ Կա թախանձանքով ինդրեց տեղեկութիւն տալ ձեզ, որ աղաւնեակը կենդանի է։

Թէպէտ լսումէք Տէօբալդ նոցա հեղեկ մարդահաճութիւնը, սակայն չանդարտեցաւ բարկութենից և վերադառնալով վատաբաստիկներին, հարցրուց բարկութեամբ։

„Ով էք դուք, խղճուկ ուխտազնացներ։ — Մէնք գալիս ենք, պատախանեց Լուպօն, սուրբ Երկրից և հիմա վերադառնալու Ենք մեր հայրենիքը։

— Ի՞նչ են անուանում ձեզ, կրկին հարցրեց ասպետը։

— Ինձ՝ Գերմանն, ասաց Լուպօն. իսկ

այս երիտասարդին, որ իմ հօրեղքօք որդին է, իուկդարդ։ — Ինչու էք եկել դուք իմ դղեակը։ — Մէնք ինդրումնք ձեզանից հրաման ձեր դղեակում գիշերելու միայն մի գիշեր. վաղը արեւ ծագելու պէս կուղեռնք ձանապարհ. մեզ շատ փափազելի է շոտափոյթ տեսանել մեր հայրենիքը, ձնողքը։

— Դուք ստումէք, սկսեց գոչել Տէօբալդ բարձր ձայնով։ Քո անունը Լուպօն, վաղեմնի եղեռնագործ. իսկ քո ընկերակցինը — Օրոս. դուք ուխտագնացներ չեք, այլ չարագործ աւազակներ ու մարդասալաններ։ Տիւրինգը չէ ձեր հայրենիքը։ Դուք որոնումէք ինձ մօտ հիւրնկալութիւն ինձ սպանելու նպատակով և բոլոր ընտանիքս սուրբի քաշելու, կողոպտելու և այրելու իմ դղեակը։

Վուք կստանաք ձեր չար դիտաւուրութիւնների փոխարէնը վարձատրութեանց արժանի հատուցում. ձեր կամքն էր զգենուլ իմ հագուստները, իմ շղթան և իմ նշանը: Ուրեմն իմ առաջեւ այս բոպէումն մերկացուցէք, ասաց իւր ծառաներուն, այս ոչխարազգեստ աւազակներից կեղակարծ հագուստը:

Ես կամենումեմ տեսանել դոցա առաջիկոյ իսկական հագուստները, զինազուրկ արէք դորանց և ձգեցէք ստորերկեայ դղեակը": «Օառաները մերկացրին նորանց ուխտագնաց հագուստներից և աւազակները երևեցան Ճօշով դաշոյնները կախ տուած գոտիներից:

Տէօրալդ սաստիկբարկութեամբ սկսեց յանդիմանել նորանց այդ վստահութեան և ընդ տեսակաւ բարեպաշտ երենալու համար, որով կամենումէին խա-

բել պարզամիտ և բարի մարդկանց: Յետոյ նա միւս անդամ հրամայեց ձգել նորանց ստորերկրեայ դղեակը:

Գտանուելով բանտարգելութեան մէջ՝ երիտասարդ աւազակը դարձաւ դէպի լուպօն հետևեալ հարցով.

„Ո՞րպիսի հնարքով ասպետի սիրտը զգաց և ո՞րպէս իմացաւ մեր դիտաւորութիւնքը, և նա ո՞րպիսի իսկութեամբ գիտէր մեր բոլոր դաւաճանութիւնները: Կորան յայտնի էր բոլորը, ինչ որ մենք Ճանապարհին խօսած էինք. չեցէ՞ մեր ուղեկից սպասաւոր պատանին մեր խօսակցութիւնը հասկանալով՝ մատնեց մեզ:

— Ոչ. այդ անկարելի է, ասաց լուպօն: Մի թէ նա լուսամուտից մտաւ դղեակը, մեր դալստեան Ժամանակ նա

այստեղ չեր, ո՞չ մի վայրկեան չէռացրի
աչքերս զղեակի դոնից և ո՞չ մէկը՝ բա-
ցի մեղանից, ներս չմտաւ։ Եյստեղ
թագումէ մի որ և է ոգի գերբնակա-
նապէս . . . Եյս ասելով վաղեմնի եղեռ-
նագործը աննկարագրելի կատազութեան
մէջ ընկաւ, անէծք շատ կրկնուեցան
Տէօբալդի վերայ նորա շրմունքներից։
„Եպիրա՛տ . . . բացագանչեց . . . նա, նա
միայն պատճառն է մեր կորստեան“։
Չարութեամբը անգլացած, լուպօն
չկամեցաւ զգալ, թէ ինքը իւր չարա-
գործութեան պատճառովն էր, որ ապա-
բաղդացաւ։

Ըսդհակառակը նորա ընկերակից Օր-
սօն սկսեց դառն լաց լինել և նախատել
նորան . . . „Եւա՛զ. ինչո՞ւ ես լսեցի քո
նենդաւոր համոզմունքին. դու խոսսա-
ցար ինձ ուրախարար կեանք յարգու-
թիւնութեան մէջ, իսկ հիմա
ես տեսնումեմ իմ առաջև միմիայն մահ,
որ ձգումէ զարհուրանքի մէջ, դու հաւա-
տացրիր ինձ, թէ Եստուած չի պատու-
հասում պատուիրանաղանցութեան հա-
մար, ո՞չ այս կեանքում և ո՞չ ապագայ
կեանքում։ Բայց ներքին ձայնը թէպէտ
ասաց ինձ հակառակը, նախագուշա-
կելով ինձ մերձաւոր պատուհար։

„Են. ինչո՞ւ ես անուշադիր եղայ նո-
րան. հիմա ի՞նչ մնաց իմ ամեն ժո-
ղոված կողոպուտներից և սպանութիւն-
ներից։ Եթէ ես ապրէի ընտիր վատա-
կովս և ունենայի մաքուր խիղճ, տպա-
կլինէի բաղդաւոր, հանգիստ ու խաղաղ,
բայց հիմա Եստուած պատուհասեց
ինձ իմ զաղանի և յայտնի պատուի-
րանաղանցութեանց համար։ Կա ինձ
նոցա համար այս լուսաղուրկ արգելա-

նոցում թողեց . այս աշխարհումն ինձ
այլ ևս հարկ չէ սպասել դժուժեան .
իսկ ապագայ կեանքում ցանկայի՛ գէթ
ներումն ստանալ : Թառղ ես օրինակ լինիմ
նորահաս մարդկանց , որոնք ինձ պէս
կարող են մատնուիլ գայթակղեցուցիչ
փորձութիւնների , ինձ պէս կարող են
ընկնել կորստեան փոանգի մէջ :

Երբ աւազակները ողբումէին իւ-
րեանց ճակատագիրը , Տէօբաղդ . հնարք
գործ գրեց կալուլ նոցա հաղորդա-
կիցներին . դաշնաւորած ժաման հրա-
մայեց նա հիւրընկալ սենեակում դնել
երեք վառած մոմերով շամադաններ :
Դռնապահը , որի հաւատարմութիւնն
ու կարողութիւնը արգէն բազմիցս փոր-
ձուած էր , ուղևորեցաւ դէսի դռնակը
ծառաների հետ միասին , նորանց յանձն
արած էր ձերբակալել աւազակներին ,

որոնք մտադիր էին մտնել դղեակը :
Աչալրջութեամբ նա սպասեց մինչեւ
կէս գիշեր . դուրս եկաւ լուսինը և նո-
րա լոյսն սկսեց լուսաւորել աշտարակի
տանիքը . ծառաներն սկսեցին համբե-
րութիւնները կորսնցնել , այսու ամենայ-
նիւ նոքա չէին ունենալ յաջողութիւն ,
եթէ աւազակները նշմարէին նորանց :

Իմ միտքս եկաւ բարեյաջող մտա-
ծողութիւն , ասաց պահապանը .— ես
կզգեստաւորիմ կեզակարած ուխտա-
զնացների հագուստները . տեսանելով ինձ
այն հագուստներով , նոքա կհամարեն
իւրեանց հաղորդակիցներից : ‘Նա շու-
տով զգեստաւորուեցաւ , իսկ ծառա-
ները թագ կացան կոթողի տակ :

Վերջապէս լսուեցաւ բաղխումն .
դռնապահը հանդարտութեամբ դռնակը
բաց արաւ . աւազակներից մէկը մօտենա-

լովնորա ականջին, փափսալով հարցրեց.
„Ճամանակի՞ն արդեօք եկանք մենք:
—Եյ՛, պատասխանեց դռնապահը,
հանգիստ կացէք և բոլորովին աներկիւղ
մտէք ներս“:

Մինիւմիւսի յետեից ներս մտան
սոքա սրահը սպառազինած ունելով
իւրեանց հետ դիւրավառնիւթեր, որոնց
միջոցաւ հեշտութեամբ կարող էին այ-
րել դդեակը: Հազիւ թէ յետինը ներս
էր մտած, իսկոյն դուռը շտապով փա-
կուեցաւ: Վոթողի տակ՝ և միւս թագ-
կացած ծառաները յարձակուեցան ա-
ւազակների վերայ: Խնդր ասակետը երևե-
ցաւ թիկնապահների ուղեկցութեամբ,
որոնք կրումէին իւրեանց ձեռներում
մոմեր: Վեազակներն ուշաթափ եղած՝
չունեցան սուրերին ձեռք մօտեցնելու
ժամանակ՝ անզամ: Կորանց պմենին

շղթայակայապ Տէօբալդի հրամանին հա-
մաձայն ձգեցին ստորերկրեայ արգելա-
նոցը:

Երբ բոլորը խաղաղութեամբ և յա-
ջողութեամբ վերջացաւ, ասպետը վե-
րագարձաւ դէպի սենեակը՝ ուրախալի
լուր աւետելու ամուսնուն ու դստերը,
որոնք մեծ անհանգստութեամբ սպա-
սումէին:

Ոոզալինդն ու Լմման իւրեանց կող-
մից նոյնպէս սաստիկ անհանգստութան
մէջ էին, Գալկէնբուրգից ոչ մի լուր
չստանալու մասին: Լմման արդէն տան
անգամից աւելի սանդուղից աշտարակի
վերայ ելած էր դիտելու, թէ արդեօք
ձի չի արշաւում դղեակից:

Երեղակն արդէն հասարակաց կէտի
վերայ էր (կէսօր): Կորանց սաստիկ
տիսրութիւնը տիրեց և իւրաքանչիւր

ժամը նոցա համար յաւիտենականութիւն էր երեսւմ:

Երեկոյեան դէմ Կմման միւս անգամ ենելով աշտարակի վերայ հեռուից նկատեց անթիւ հեծելազօրով կառքը, ուրախութեամբ լցուած՝ շտապեց նա ամենաբարձր գոչելով:

„Այրիկ, մայրիկ, նոքա ինքեանք են դալիս, շտապիր ենել նորանց յառաջ“;

Եւ արդարե Տէօբալդ, Օտիլիան և Վգնեսան արեւագալին ճանապարհ էին ելած՝ ցանկալով անձամբ անձին նորանց բարեհամբաւ լուրը իւրեանց սքանչելի ազատութեան վերայ Գողէնքուրդի մէջ; Վսպետը տեսնելով Ոռզալինդին և Լյուսային, իսկոյն վայր եկաւ երիվարից:

Օտիլիան և Վգնեսան նոյնակէս իւրեանց կառքից և երեքը միասին իւրեանց

ազատիների առաջն ելան՝ մատուցանելովի բոլոր սրտէ ողջոյն հանդերձ երախտագիտական գոհունակութեամբ: Կոքա բոլորը լի ուրախութեամբ սկսեցին հազարաւոր հարցմունքներ անել մէկը միւսին: Վերջապէս միասին գնացին հետիւտս դէպի դղեակը: Դղեակում արդէն ընթրիքը պատրաստած էր: Վէօնարդօն ընթրիքի ժամանակ ծառայումէր երկրորդելով աւազակների բոլոր խօսակցութիւնը. նա նոյնակէս պատմեց այն պատահարի համար, թէ նորահաս աւազակը իրան ո՞րպէս պաշտպանեց ու խափանեց իւր ընկերակցի մուգրութիւնը (նորան ձգել ի կորուստ):

Երբ ընթրիքը վերջացաւ, Տէօբալդ վեր առաւ իւր արծաթեայ բաժակը, խմեց Կմմայի կենացը, ասելով. „Մէկը

նորա բարեբաստիկ ազդմանը պարտաւկան ենք մեր կեանքով:

—Ո՞չ. ոչ. պատասխանեց կարմրելով համեստ և ամօթիած կաման. սորանով դուք պարտական եք Ազնեսային, որ կարեկցութիւն ցոյց տուեց դէպի աղաւնեակը և նորա սրտի ազնուութեանը, որ նա չմերժեց իմ խօսքերը ընծայելով նորան ինձ:

—Փառաբանենք Աստուծուն, ասաց Ոռղալինդը, մեղ այսպիսի զաւակներ պարգևողին. բայց զգուշացէք, շարունակեց նա, զգուշացէք չմեծամտել թէ ամենայն պատահմունքների մէջ բաղդաւորուած ենք. նայեցէք Աէնարդօի երախտազիտութիւնը. ճշտիւ դատելով, նա աւելի արեց, քան սորանք:

—Ստոյգէքո ասածը, ասաց ասպետը. ուրեմն թող ըմակէ այս բաժակը մեր

կեանցը: Տարի Աէնարդօ, աղնիւ ծառայ, ժամանակին դու կլինես հոչակաւոր վահանսակիր. քո բարեխրտութիւնն է, որ քեզ արժանացնումէ մեր սիրոյն: Մէնք նոյնպէս պարտական ենք բարեհոգի Ադալրիս ասպետին: Երախուգիտական արդաւանութեան:

—Ի՞նչ կլինէր մեզ համար, եթէ նա չխնամէր այս անօգնական որբին:

—Ինչո՞ւ դուք ոչինչ չէք ասում Տէօբալդ ասպետի վերայ, ասաց Ոռղալինդ, որ իւր անձը պաշտպան է դրած այրիներին ու որբերին: (Օտիլիան և Ազնեսան ապացուցին նոյնպէս իւրեանց սէրն ու յարգանքը: Աստուած ամենայն ինչ հաստատած է ի բարին, օրհնեալ լինի Աստուծոյ անունը:

Եղնեսան մեկնեցաւ սեղանից և շուտով վերադարձաւ ունելով ձեռքին հեղեկ աղաւնեակը, որ բերած էին Գալկէնբուրգից, համբուրգելով կրկին յանձնեց ընկերակցուհուն։ Վղաւնեակը ելաւնորա ուսի վերայ՝ բռնած ունելով իւր կտուցում ոսկեայ ձիթենու ձիւղ։

”Միրելի՛ երեխայ, ասաց Օտիլիան, դառնալով դէպի Լմման, ընդունիր այս ձիթենու ձիւղը ի նշան մեր երախտազիտութեանը և յիշատակ յաջողակ ազատութեան երկիւղալի կորստից։

— Ես սա ստացայ իմ բարեսիրտ և նազելի մայրիկից, երբ նա հրամայած էր ինձ սերտել անգիր հոգեսր երգեր ու սաղմոներ. միանգամ լիովին շնորհակալ եմ յառաջադիմութենից, վարձատրեց ինձ այս ընծայով. այն օրից ես չեմ մոռացել ոչ մի բառ իմ անգիր ա-

րածիցը, այն երգերից մէկ շատ յարմարը միտքս եկաւ. միասին երգենք։ Օտիլիան և Եղնեսան երգեցին հետևեալը.

Ովկ իւր անձն Վստծուն յանձնէ, Բոլոր սլրառվ նորան զիմէ, Կա ոչ երբէք թըշուառ լինի, Եւ համարձակ ասել կարէ, Միայն Տէրն է իմ պահապան, Միակ իմ յոյս, միակ պաշապան. Այս փլրկիչ է աշխարհի, Արով չարից չեմ երկո՞նչ։

Բոլոր ներկայ գտնուողների աչքերը թրչուեցան արտասուքով և ամենաբարձր մտքեր թափանցեցին բոլորի սրտերում։

Իսրայիլ զան քիրադրի հը կարուն ու ուղիւր շրջեւ քայլութեան ժամանակ Քայլի

շատ ուսց թի վիզերից միա պահան
ոգմարդ միասին . այլ ողուց զան
և միզերից մասմարի և մասմիւ(?)

պահան

մահաց մասմարի մաս դի գո ի Ա

, այդ մահու խոսք ոգու կ

, այդ ուսց թի զեզը չի ամ

մասմար այ է այդ մաս(?)

, մասմար բախ , օրու այ բախ(?)

ու զանիւ է մասմար ու ի

է մասմար այ բախ խու

զանիւ մասմար բախ զան


մասմար մասմար մասմար մասմար(?)

մասմար մասմար մասմար մասմար



* Վ. ԶԵՂՋԻ ՑՂԱՔՈՅ ՀԿՐԴՈՒԹՅՈՒՆ

1952 Տ Հ 1952 Տ Հ



3359

0007639

66

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0007639

